# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀՋ-ՆԲՄԾՁԲ-25Խ/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. օգոստոսի 22-ին կնքված N ՀՀԱՄՄՀՋ-ՆԲՄԾՁԲ-25Խ/4 ծածկագրով պայմանագրում 2026թ. մայիսի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման համար ֆինանսական հատկացումների նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի և «Փրոմուշն» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026թ. մայիսի 13-ին կատարված փոփոխությունների արդյունքում ամբողջությամբ լուծվել է Պայմանագիրը և հաստատվել է վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2026թ. մայիսի 13-ին կնքված Համաձայնագիր 2-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Համաձայնագիրը կնքվել է հիմք ընդունելով 2025թ. օգոստոսի 22-ին կնքված N ՀՀԱՄՄՀՋ-ՆԲՄԾՁԲ-25Խ/4 ծածկագրով գնման պայմանագրի 7.5 կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետը:

Պատվիրատու՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ